

### 5.13. 33 տարածքի 2003թ. մարտ ամսվա հիդրոտեղությունաբանական պայմանների բնութագիրը

Ըստ 33 բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2003թ. մարտ ամսին միջին ամսական ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-3°C (Ստեփանավանում, Տաշիրում՝ 4°C): Լեռնային շրջաններում այն տատանվել է -3 -5°C (Աշոցքում՝ -8°C), Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ 0 -4°C, Արարատյան դաշտում՝ +3 +4°C, Սյունիքի հովիտներում՝ +4 +6°C սահմաններում: Խիստ ցածր ջերմաստիճան է գրանցվել մարտի 1-2-ին և 29-31-ին Լեռնային շրջաններում՝ -18 -27°C (Աշոցքում՝ -32°C), Լոռիում և Սյունիքի նախալեռներում -15 -24°C, Սյունիքի հովիտներում՝ -4 -10°C, Արարատյան դաշտում՝ -6 -8°C : Այդ օրերին Լեռնային և նախալեռնային շրջաններում օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 10-15°C-ով, հովտային շրջաններում՝ 7-9°C-ով:

Բարձր ջերմաստիճան է գրանցվել մարտի 15-16-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 4-10°C-ով: Սյունիքի հովիտներում առավելագույն ջերմաստիճանը հասել է +15 +19°C, Արարատյան դաշտում +13 +17°C, Լոռիում, Տավուշում՝ +11 +13°C, Լեռնային շրջաններում՝ +4 +8°C:

2003թ մարտը առանձնացել է տեղումների առատությամբ: Միայն 7 օր տեղումներ չեն դիտվել: Ամենուրեք տեղումների քանակն ավել է եղել նորմայից 1.5-2.5 անգամ (Արարատում՝ 3 անգամ, Ամասիայում եղել է նորմայի սահմաններում, Քաջարանում կազմել է նորմայի 69%-ը):

Մարտի 6-ին, 23-ին և 26-ին Աշտարակում և Ֆանտանում դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 50 մ: Տարվա առաջին ամպրոպը գրանցվել է Մեղրիում:

Ուժեղ քամի է գրանցվել մարտի 14-ին և 26-ին Տաշիրում, Ամասիայում և Թալինում: Քամու առավելագույն արագությունը եղել է 16-18 մ/վրկ, պոռթկումները՝ 22 մ/վրկ:

Չյան ծածկույթի բարձրությունը մարտի 31-ի դրությամբ Ջերմուկում կազմել է 125 սմ, Ապարանում՝ 100 սմ, Հրազդանում՝ 83 սմ, Շիրակում՝ 63 սմ, Գեղարքունիքում, Քաջարանում և Լոռիում՝ 25-47 սմ, Դիլիջանում, Սյունիքի նախալեռներում՝ 10-15 սմ, Կապանում՝ 2 սմ: Մնացած շրջաններում այն բացակայել է:

Արարատյան դաշտում ձնածածկը վերացել է մարտի 5-ից, Սյունիքի հովիտներում՝ մարտի 1-ից (մարտի 28-30-ը այստեղ նորից առաջացել է ձյան ծածկ), Տավուշի հովտային շրջաններում մարտի առաջին կեսին այն բացակայել է, 2-րդ կեսին՝ նորից առաջացել է:

Մարտին հանրապետության գետերի մեծ մասում ջրի ամսական միջին ելքը մոտավորապես կազմել է նորմայի 80-100%-ը:

Սևանա լճի մակարդակը ամսվա ընթացքում բարձրացել է 7 սմ-ով և 2003թ. մարտի 31-ի դրությամբ կազմել 1896.89 մ, 2002թ. նույն օրվա համեմատությամբ այն բարձր է եղել 48 սմ-ով: Լճի եզրասառույցը վերացել է ամսվա առաջին կեսին: